Նորին գերազանցություն ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ՝ ԽՍՀՄ պրեզիդենտին, Մոսկվա, Կրեմլ

Հարգելի պրեզիդենտ, սույնով դիմում ենք Ձեզ՝ հայտնելու համար մեր մտահոգությունը ԼՂԻՄ-ում և Հայաստանում առկա մարդկային իրավունքների ոտնահարումների վերաբերյալ: Մենք իրազեկ ենք, որ Դուք դժվարին ժամանակ եք դիմագրավում ԽՍՀՄ-ում, առավել ժողովրդավարական կառույց ստեղծելիս: Այդ իսկ նկատառումով մենք ցանկանում ենք Ձեր ուշադրությանը ներկայացնել ԼՂԻՄ-ում և Հայաստանում առկա ներկայիս պայթյունավտանգ կացությունը, որը հղի է լուրջ հետևանքներով, եթե անմիջապես ուղղիչ միջոցներ ձեռք չառնվեն: Մենք հաղորդագրություններ ենք ստացել, որ ԼՂԻՄ-ում գտնվող զորքը ապրիլի 26-ին կրակ է բացել անզեն հայ քաղաքացիների վրա, վիրավորելով նվազագույնը՝ 4 անձանց: Մենք նմանապես իրազեկ ենք, որ սույն շրջանի զինվորական հրամանատարությունը հրաման է արձակել ԼՂԻՄ-ի ժողովրդավարական շարժման ղեկավարներին ձերբակալելու մասին:

Ապրիլի 30-ից ի վեր, 37 հայ ղեկավարներ և մտավորականներ զինվորական իշխանությունների կողմից ենթարկվել են տնային կալանքի: Մենք խորապես ցավում ենք քաղաքացիական բնակչության դեմ ծայր առած բռնության այս նոր արարքի համար, քաղաքացիներ, որոնք փորձում են կիրառել իրենց համաժողովրդավարական իրավունքները և մտահոգ են սույն շրջանում քաղաքական և տնտեսական կացության վատթարացման հարցով:

Մեր ըմբռնումն այն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որը շարունակում է դիմագրավել Ադրբեջանի կողմից կատարվող տնտեսական շրջափակման դժվարությունները, ենթարկվում է մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների ամենօրյա ոտնահարումների՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ից, շրջանում զինվորական հրամանատարության կողմից իրագործվող միջոցառումների հետևանքով: Զինվորական իշխանությունները ծանր գրաքննություն են հաստատել տեղական հաղորդակցական միջոցների և մամուլի վրա, վերացրել են քաղաքացիական ազատությունները և հավաքներ գումարելու ու խոսքի ժողովրդավարական իրավունքները, ինչպես նաև խոչընդոտել են դեղորայքի ու սննդամթերքի առաքումները: Վատթարագույնն այն է, որ խորհրդային զինվորական իշխանությունները թույլ են տալիս, որ զինյալ ադրբեջանցիների բռնությամբ հայերին նեղահանեն իրենց գյուղերից: Մինչ այդ, իշխանությունները զինաթափում են հայերին: Նրանք համանման քայլեր չեն ձեռնարկում ադրբեջանցիների դեմ:

Լեռնային Ղարաբաղը ԽՍՀՄ-ում ժողովրդավարության գլխավոր փորձաքարերից մեկն է: Մենք այդ իսկ պատճառով խնդրում ենք, որ Լեռնային Ղարաբաղի արտակարգ դրությունը վերացվի այն հաշվով, որ սույն մարզի օրենսդրական խորհուրդը կարողանա լիակատար վերահսկողություն հաստատել, ինչպես խոստացվել է պրեզիդենտի կողմից:

Մենք նմանապես խնդրում ենք, որ տվյալ շրջանի զինվորական հրամանատարությունը պաշտպանի դարաբաղյան ժողովրդին, ոչ թե հալածի նրան:

Մենք հորդորում ենք Ձեզ՝ անմիջական միջոցառումներ կիրառել, վերացնելու Ադրբեջանի կողմից գործադրվող շրջափակումը, որպեսզի մեղմացվեն դրա հետևանքով ի հայտ եկած զրկանքները:

Վերջապես, մենք խնդրում ենք, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական և քաղաքական իրավունքները ամբողջովին հարգվեն և երաշխավորվեն:

Մենք այն համոզմանն ենք, որ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում առկա մարդկային իրավունքների ոտնահարումների վերացումը ԽՍՀՄ-ի ժողովրդավարական բարեփոխական շարժման անբաժանելի և էական մասը կկազմի:

Մենք մեծապես գնահատում ենք այդ խիստ կարևոր խնդրին Ձեր հատկացրած ուշադրությունը»:

Նամակը ստորագրել են ԱՄՆ-ի 71 կոնգրեսականներ: